Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Խմբային աշխատանքների արդյունավետությունը աշխարհագրության ուսուցման գործընթացում միջին դպրոցում:
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Էդվարդ Ավագյան Աշխարհագրություն 077477030 Բնություն,աշխարհագրություն 5-12
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Կապուտանի միջն դպրոց 077477030

Բովանդակություն

Ներածություն----------3

Բովանդակություն ----------4

Խմբային աշխատանքների արդյունավետությունը աշխարհագրության ուսուցման գործընթացում:---------- 17

Եզրակացություն----------
16-

Գրականության Ցանկ----------
19

Հավելվածներ ----------20

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Հարց-Ի՞նչ մեթոդներով և հնարներով բարձրացնել խմբային աշխատանքների արդյունավետությունը աշխարհագրության ուսուցման գործընթացում միջին դպրոցում Կապուտանի միջն.դպրոցի օրինակով :Նպատակն է պարզել,թե արդյունավետ է արդյոք խմբային աշխատանքի կիրառումը և որ կարողունակությունների զարգացմանն է այն նպաստում աշխարհագրության դասաժամին:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է հետևյալ կոմպետենցիաներին. • լեզվական գրագիտություն և կարողունակություն, .սովորել սովորելու կարողունակություն,
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	5-9-րդ դասարանների աշակերտներ,տղաներ և աղջիկներ,թվով 34 աշակերտ,15-ը տղա,19 աղջիկ:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	14.08.2023- 25.09.2023

Բովանդակություն

Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հետազոտությունը իրականացրել եմ որակական ՝ դիտարկման մեթոդի միջոցով:

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Ա.Դիստերվեգը դաստիարակության կարևորագույն սկզբունքը համարում էր բնահարմարությունը, մարդու բնական զարգացման գործընթացին հետևելը, նրա անհատական և տարիքային առանձնահատկությունների հաշվառումը: Նա գրում է, որ «դաստիարակության ժամանակ պետք է նկատի ունենալ տեղի և ժամանակի պայմանները, ուր ծնվել է մարդը և պիտի ապրի, մի խոսքով՝ ամբողջ ժամանակակից մշակույթը՝ այս խոսքի լայն ու համընդգրկող իմաստով…» http://zangak.am/pdf/Mank-mitq-2014(1-2).pdf

Ժամանակակից կրթական համակարգում դպրոցի մանկավարժական գործընթացը ենթարկվել է լուրջ փոփոխությունների, որոնք

պահանջում են դասավանդման մեթոդների վերանայում, նոր, ակտիվ ուսուցման մեթոդների ներմուծում:Ուսուցչի և աշակերտի համագործակցությունը հնարավորություն է ստեղծում դասանյութի նոր դիդակտիկ ուղիներ փնտրելու աշակերտակենտրոն դասի կազմակերպման տեսանկյունից: Սոցիալական հմտությունների զարգացումը կրտսեր դպրոցականների շրջանում,մասնավորապես փոխներգործուն մեթոդների կիրառմամբ համարվում է այսօր կարևորագույն մանկավարժական խնդիրներից տարրական դպրոցում,ինչը նպաստավոր պայման է հանդիսանում կրտսեր դպրոցականների արդյունավետ սոցիալականացման համար:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը դպրոցում կնպաստի դպրոցականների <<նուրբ հմտությունների>>(soft skills) ձևավորմանը՝ հույզերի, թիմում աշխատելու և հաղորդակցական կարողությունների,հասակակիցների հետ միջանձնային առողջ փոխհարաբերությունների կառուցմանը ,ինքնավստահության,կոնֆլիկտների հաղթահարման,ինքնագնահատման և փոխադարձ գնահատման,փոխօգնությանը: Այսօր մանկավարժության գերխնդիրն է ուսուցման գործընթացի ակտիվացման և արդյունավետության բարձրացման ձևերի և միջոցների որոնումն ու մշակումը:

Մանկավարժության մեջ արդեն իսկ ձևավորվել են ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը նպաստող մի շարք

մոտեցումներ, որոնք ընդունված է անվանել նորարական մոտեցումներ, որոնք խթանում են երեխայի ակտիվությունը ուսուցման գործընթացում, զարգացնում են նրա

ինքնուրույնությունը,նախաձեռնողականությունը, նպաստում են նրա ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և ամենակարևորը հասակակիցների հետ հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Փոխներգործուն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցի մանկավարժական գործընթացում՝ ժամանակակից մանկավարժական մոտեցումներից մեկն է, որը նպաստում է ինչպես երեխայի որպես սուբյեկտ հանդես գալուն, այնպես էլ նրա ստեղծագործական կարողությունների ձևավորմանը: դպրոցում այսօր կիրառվում են մի շարք մանկավարժական տեխնոլոգիաներ՝ խաղային, պրոբլեմային, նախագծային և այլն: Այդ տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն է գրավում համագործակցային ուսուցման տեխնոլոգիան:

Այսպիսով,յուրաքանչյուր աշակերտ ընկալվում է որպես եզակի անհատականություն,ով պետք է զարգանա իր անհատական ընդունակություններին համապատասխան:Ուսուցիչը դասի ընթացքում պետք է կարողանա ստեղծել այն մանկավարժական պայմանները,կիրառել տարբեր մանկավարժական տեխնոլոգիաներ ուսուցման գործընթացում,որոնք հնարավորություն կտան աշակերտներին ինչպես դրսևորվելու և առանձին անհատ և

համագործակցելու հասակակիցների հետ՝զարգացնելով մի շարք հաղորդակցական ընդունակություններ՝հիմնվելով փոխադարձ հարգանքի և դրական կողմերի վրա։Վ.Ա.Սլաստենինը, Ի.Ֆ Իսաևը գտնում են, որ մանկավարժական տեխնոլոգիան մանկավարժի գործունեության փոխկապակցված և հաջորդական համակարգն է, որն ուղղված է մանկավարծական խնդիրների լուծմանը: Վ.Ի.Անդրեյևը գտնում է, որ մանկավարժական տեխնոլոգիան գործնականորեն կիրառվող մանկավարժական օրինաչափությունների, նպատակների, սկզբունքների, բովանդակության, ձևերի, մեթոդների, ուսուցման ու դաստիարակության միջոցների նախագծումն է, որը ապահովում է արդյունավետության բարձրացում:

Մեր հետազոտության շրջանակներում մենք դիտարկելու ենք համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների դերը խմբային աշխատանքը դպրոցականի ստեղծագործական կարողությունների ձևավորման գործում: Չնայած նրան, որ համագործակցային ուսուցման տեխնոլոգիաները վերջին շրջանում լայն կիրառություն են գտել դպրոցում, սակայն այսօր դեռևս կա դրանց համակարգման և արդյունքների վերլուծության անհրաժեշտություն:

Հետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել գրականության կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաների էությունը:

2. Բացահայտել համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կարևորությունը և անհրաժեշտությունը դպրոցի մանկավարժական գործընթացում:

Վերլուծել համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի դերը դպրոցականների ստեղծագործական կարողությունների ձևավորման գործում:

0. Հետազոտության մեթոդներն են.

1. գիտամանկավարժական ժամանակակից գրականության ուսումնասիրություն,

0. հիմնախնդրին վերաբերող ժամանակակից պարբերական մամուլի, ամսագրերի և էլեկտրոնային նյութերի ուսումնասիրություն,

0. կիրառել ենք հարցաթերթիկի, դիտման մեթոդները:

Հետազոտության օբյեկտը համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների ուսումնասիրման գործընթացն է աշխարհագրության դասին:

Հետազոտության առարկան կդպրոցականների ստեղծագործական կարողությունների ձևավորումն է համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ:

Կոմպետետություն .

- Լեզվական կոմպետենցիա և գրագիտություն

Վերապատրաստման թեմա՝

- Տարիքային հոգեբանություն
- հետազոտական աշխատանք կատարելու սկզբունքներ

Քանակական և որակական մեթոդներ.**Հետազոտության տեսական նշանակությունն** այն է, որ դիտարկվել և վերլուծվել են համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը գրականության դասին , տեսականորեն հիմնավորվել և հետազոտությամբ հաստատվել է դպրոցականների ստեղծագործական և հաղորդակցական կարողությունների ձևավորման գործում համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը:

Հետազոտության գործնական և կիրառական նշանակությունը. դպրոցականների ստեղծագործական և հաղորդակցական կարողությունների ձևավորման գործում մեր կողմից առաջարկված

համագործակցային ուսուցման մեթոդների, միջոցների և ուղիների վերաբերյալ մեթոդական հանձնարարականները դպրոցի մանկավարժների կողմից կարող են կիրառվել ուսումնադաստիարակչական գործընթացում:Համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում `ուսուցիչ- աշակերտ,աշակերտ–աշակերտ,որն էլ իր հերթին աշակերտ-դասարան փոխգործունեության ապահովելու օրինակ է Դպրոցում աշխատանքի արդյունավետ ձևերից մեկը խմբային աշխատանքն է: Սովորողները սիրում են աշխատել խմբերով, միայն պետք է կիրառել աշխատանքի այս ձևն այնքան հաճախ, որքան հնարավոր է: Փորձը ցույց է տալիս, որ խմբային աշխատանքի նպատակը յուրաքանչյուր աշակերտի ակտիվ ներգրավումն է ուսումնական նյութի յուրացման գործընթացում [10, էջ 96]: Խմբային աշխատանքի ժամանակ ձևավորվում են սովորողի այնպիսի կարողունակությունները, ինչպիսիք են անհրաժեշտ տեղեկույթն ընկալելու, վերլուծելու, հաղորդակցվելու, քննարկելու, ուսումնական խնդիրներ բացահայտելու, փոխանցելու, անդրադառնալու և այլն: Խմբային աշխատանքի ժամանակ ցածր ուսումնական հնարավորություններով աշակերտները խմբերում ավելի հաճախ են արտահայտվում, քան սովորաբար, նրանք չեն վախենում խոսել և հարցնել: Սա խոսում է նրանց ակտիվության բարձրանալու մասին, որը նպաստում է անհրաժեշտ գիտելիքների, կարողություններ և հմտությունների ձեռքբերմանը: Ուսուցման խմբային մեթոդը մեծ ազդեցություն է ունենում ոչ միայն սովորողների ուսուցման, այլև դաստիարակության վրա: Նրանք, որոնք միավորվել են նույն խմբում, սովորում են միասին աշխատել, համագործակցել և հաղթահարել դժվարությունները: Սովորողներն այս ընթացքում սկսում են պատասխանատվություն զգալ իրենց քիչ պատրաստված ընկերների համար, իսկ վերջինները ձգտում են խմբում դրսևորվել պատասխանատու և բանիմաց: Այսպիսով, խմբերն իրականացնում են համախմբման, հաղորդակցական և ինքնակազմակերպմանն ուղղված անձնակենտրոն գործառույթներ□

Մասնագիտական գրականության ուսումնասիրության ընթացքում պարզեցինք, որ գրականության մեջ ներկայացված չէ խմբային ուսուցման եղանակների միասնական մոտեցում: Հետազոտողների ճնշող մեծամասնությունը, խմբային աշխատանք ասելով, հասկանում են փոքր խմբերի աշխատանքը դասարանի ներսում: Նորարար մանկավարժ Ի.Մ.Չերեդովը խմբային աշխատանքը սահմանում է որպես ուսուցման կազմակերպման ձև, որի ընթացքում ուսուցիչը ղեկավարում է դպրոցականների խմբային գործունեությունը: Նշենք, որ սահմանումը պատկերացում չի տալիս խմբերում

սովորողների փոխհարաբերությունների բնույթի մասին, սակայն դա կարևոր է, քանի որ եթե հանձնարարությունը կատարելիս երեխաները չեն շփվում միմյանց հետ, ապա խոսքը ոչ թե խմբային, այլ անհատական աշխատանքի մասին է□ Ի.Տ.Օգորոդնիկովը խմբային պարապմունքի տակ ենթադրում էր «շերտավորված պարապմունք տարբեր պատրաստություն ունեցող աշակերտների խմբերի հետ» [20, էջ 432]□ Ընդգծվում է, որ խմբերում աշխատանքը կարող է իրականացվել համատեղ և անհատական՝ խմբերում հետագա քննարկմամբ: Մեր կարծիքով այս սահմանումը բավարար չէ, քանի որ չի ընդգրկում ուսումնական գործունեության կազմակերպման խմբային եղանակների ողջ բազմազանությունը: Վ.Վ.Կոտովը գտնում է, որ խմբային աշխատանքը կոլեկտիվ ուսումնական գործունեության ձև է և այն սահմանում որպես «խմբի կազմում դասի ժամանակ առաջադրված ուսումնաճանաչողական խնդրի լուծման նպատակով աշակերտների համատեղ ջանքերի կազմակերպման միջոց»: Սակայն նման մեկնաբանությունը չի արտացոլում խմբային աշխատանք կազմակերպելիս ուսուցչի և աշակերտների փոխհարաբերությունների բնույթը, իսկ ուսուցչի և աշակերտների հարաբերությունների առանձնահատկություններում է խմբային աշխատանքի մանկավարժական արդյունավետությունը□ Հ.Յ.Լիմեթսը խմբային աշխատանքի մասին հասկացությունը սահմանելիս ելնում է նրանից, որ խմբային աշխատանքի ձևը որոշում է ուսուցչի և աշակերտների, ինչպես նաև սովորողների միջև փոխգործակցության բնույթը. «Խմբային աշխատանքը բնութագրվում է սովորողների միջև անմիջական փոխգործակցությամբ, նրանց համատեղ փոխհամաձայնեցված գործունեությամբ: Ուսուցչի հետ մշտական անմիջական կապ չկա»□ Այս սահմանումն ավելի ճշգրիտ է բնութագրում խմբային ուսուցման եղանակի էությունը, սակայն չի արտացոլում սովորողների աշխատանքի կազմակերպման ձևը: Այսպես, որոշ հետազոտողներ (Վ.Վ.Կոտով, Տ.Մ.Նիկոլաև, Գ.Ա.Ցուկերման և այլն) կարծում են, որ համատեղ համաձայնեցված գործունեությունը կարելի է կազմակերպել նաև դասի ֆրոնտալ աշխատանքի ժամանակ:

Մեր ուսումնասիրությունների ժամանակ պարզեցինք, որ խմբային աշխատանքի ամենատարածված ձևերից մեկը, թերևս,

զույգերով աշխատանքն է: Այն հաջողությամբ օգտագործում են դպրոցի ուսուցիչները երեխաների ուսուցման առաջին իսկ օրերից, սովորեցնելով նրանց համագործակցել: Ամենից հաճախ այն ձևավորվում է մեկ սեղանի մոտ նստած երեխաներից: Զույգերով աշխատանքի դեպքում երեխաներն ուսումնական նյութը յուրացնում են ավելի արագ և հաճույքով: Նրանց մեջ աճում է հետաքրքրությունը խմբում կատարվող աշխատանքների նկատմամբ□ Զույգերով աշխատելիս երեխաները սովորում են ուշադիր լսել ընկերոջ պատասխանը (քանի որ նրանք հանդես են գալիս որպես ուսուցիչ), մշտապես պատրաստվել պատասխանին (երեխայի համար շատ կարևոր է, որ նրան հարցնեն), սովորում են խոսել, պատասխանել, ապացուցել□ Աշակերտն այս պահին կարող է անել այն, ինչն այլ ժամանակ չի թույլատրվում՝ ազատ շփվել ընկերոջ հետ, նստել ազատ, զրուցել, վիճել□

Այն բանից հետո, երբ աշակերտները զույգերով աշխատելու կարողությունները ձեռքեն բերել, կարելի է ձևավորել աշխատանքային խմբեր:

Դասարանի բաժանումը խմբերի աշխատանքի կազմակերպման համար խիստ կարևոր պահ է: Խմբերի ձևավորման հնարներն ու մեթոդները շատ են. ըստ ցանկության, պատահականորեն, որոշակի հատկանիշով, «առաջնորդի» ընտրությամբ, մանկավարժի ընտրությամբ□ Խմբի մեջ միավորումը տեղի է ունենում փոխադարձ ընտրությամբ: Խմբերի բաժանման առաջադրանքն, ըստ ցանկության, կարող է տրվել առնվազն երկու տարբերակով՝ ա) բաժանվեք ըստ ... հոգանոց խմբերի, բ) բաժանվեք ... հավասար խմբերի [13, էջ 201]: Խումբը, որը ձևավորվում է պատահականորեն, բնութագրվում է նրանով, որ կարող է միավորել երեխաներին, ովքեր այլ պայմաններում չեն համագործակցում միմյանց հետ, կամ նույնիսկ թշնամություն ունեն: Պատահաբար նույն խմբում աշխատանքը զարգացնում է գործունեության պայմաններին և տարբեր գործընկերներին հարմարվելու մասնակիցների ունակություն, որը խմբային աշխատանքի խնդիրներից է: Խմբերի ձևավորման այս մեթոդն օգտակար է այն դեպքերում, երբ ուսուցչի առջև խնդիր է դրված սովորեցնել երեխաներին համագործակցել□ Խմբային աշխատանքի մեթոդը կարող է օգտագործվել դասարաններում, որտեղ աշակերտների միջև ընդհանուր առմամբ

բարեկամական հարաբերություններ են ձևավորվել: Բայց ամեն դեպքում, ուսուցիչը պետք է ունենա միջանձնային

կոնֆլիկտները լուծելու բավարար կարողունակություն: «Պատահական» խմբերի ձևավորման եղանակներն են. վիճակահանություն, միավորում նրանց, ովքեր նստում են կողք կողքի (նույն շարքում, դասարանի մեկ կեսի մեջ), տարբեր հնարների օգնությամբ և այլն [11, էջ 47]: Ըստ որոշակի հատկանիշի խմբերի ձևավորումը կատարվում է ուսուցչի կամ որևէ աշակերտի կողմից: Կարելի է բաժանել անվան առաջին տառով (ձայնավոր- բաղաձայն), ըստ այն, թե տարվա որ եղանակին է ծնվել (չորս խմբի), աչքերի գույնով (շագանակագույն, մոխրագույն, կապույտ, կանաչ) և այլն: Բաժանելու այս եղանակը հետաքրքիր է նրանով, որ մի կողմից կարող է միավորել երեխաներին, որոնք հազվադեպ են շփվում միմյանց հետ, կամ ընդհանրապես հակակրանք են զգում, իսկ մյուս կողմից՝ որոշակի ընդհանուր հատկանիշ է տալիս, որը միավորում է խմբի անդամներին□ Կա մի բան, որը նրանց համար ընդհանուր է և միաժամանակ տարբերում է մյուսներից [9, էջ 54]: Սա հիմք է ստեղծում խմբում միմյանց հուզական կապի միջոցով ընդունելու և մյուսներից որոշակի հեռավորության (ըստ էության, մրցակցություն) վրա լինելու համար: Շատ դեպքում ուսուցիչը խմբեր է ստեղծում որևէ կարևոր հատկանիշով՝ լուծելով որոշակի մանկավարժական խնդիր□ Այն կարող է միավորել մտավոր հնարավորություններով, աշխատանքի նման տեմպով մոտ աշակերտներին կամ, ընդհակառակը, ստեղծել հավասար ուժերով խմբեր□ Ընդ որում, խմբային աշխատանքի կազմակերպիչը կարող է բացատրել միավորման սկզբունքը, կարող է նաև խուսափել բացատրությունից [13, էջ 201]:

Անշուշտ, խմբերի աշխատանքը չի կարող գոյություն ունենալ առանց որոշակի կանոնների: Սկզբում հնարավոր է սովորողներին առաջարկել համատեղ աշխատանքի պարզ կանոններ, որոնց օգնությամբ նրանք կկարողանան վերահսկել իրենց և կատարել անդրադարձ: բարձր դասարաններում նման կանոններ (աշխատանքի գնահատման չափանիշներ) աշակերտները կարող են ինքնուրույն մշակել□ Խմբի յուրաքանչյուր անդամ պետք է կարողանա ներկայացնել ընդհանուր և իր կատարած գործը: Շատ կարևոր է ճիշտ ընտրել խմբային աշխատանքի առաջադրանքները:

Առաջադրանքները պետք է հետաքրքրեն խմբի անդամներին և ինքնադրսևորվելու հնարավորություն տան և լինեն այնպիսին, որ խմբի անդամների համաձայնեցված աշխատանքը տա ավելի լավ արդյունք, քան մասնակիցներից յուրաքանչյուրը, եթե միայնակ աշխատեր:

Անհրաժեշտ է օգտագործել.

ա) առաջադրանքներ, որոնք պահանջում են մեծ ծավալի աշխատանքի կատարում,

բ) առաջադրանքներ, որոնք պահանջում են բազմազան գիտելիքներ և հմտություններ, որոնց ամբողջությանը անհատապես չի տիրապետում խմնի երեխաներից ոչ մեկը, բայց տիրապետում է խումբն ընդհանուր առմամբ,

գ) առաջադրանքներ ստեղծագործական մտածողության զարգացման համար, որտեղ պահանջվում են օրիգինալ գաղափարներ, մոտեցումներ

Աշխատանքի բովանդակությունը պետք է հետաքրքիր Լինի սովորողների համար:

Առաջադրանքները պետք է բարդության մակարդակով երեխաներին հասանելի լինեն, լինեն խնդրահարույց, ստեղծեն որոշակի ճանաչողական դժվարություն, հնարավորություն ընձեռեն առկա գիտելիքների ակտիվ օգտագործման համար Անշուշտ, աշխատանքի կազմակերպման խմբային ձևը շատ առավելություններ ունի:

Բարձրանում սովորողների ուսումնական և ճանաչողական մոտիվացիան, իջնում նրանց տագնապայնության մակարդակը, ինչ որ խնդիրներ լուծելու անկարողության, անհաջողության վախը:

Ուսումնասիրության ընթացքում մենք համոզվել ենք, որ խմբում դպրոցականի սովորելու, գիտելիքների յուրացման և արդիականացման արդյունավետությունը ոչ միայն ամենաբարձրն է,այլև բարելավվում է դասարանի հոգեբանական մթնոլորտը, երեխաների միջանձնային հարաբերությունները: Սակայն խմբային աշխատանքն ունի նաև որոշ դժվարություններ կամ թերություններ: Չնայած խմբային աշխատանքում առաջատար դերը սովորողներն են խաղում, սակայն աշխատանքի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի ջանքերից և հմտությունից: Խմբային աշխատանքը պետք է նախ սովորեցնել□ Այս խնդրի լուծման համար ուսուցիչը պետք է ծախսի որոշ դասաժամերից պահեր, սակայն առանց պայմանների պահպանման՝ խմբային աշխատանքն արդյունավետ չի լինում□ Խմբերի չմտածված բաժանման դեպքում որոշ աշակերտներ կարող են օգտվել «ուժեղ» դասընկերների աշխատանքի արդյունքներից

Խմբային աշխատանքի կազմակերպման արդիական և հետաքրքրաշարժ եղանակներով կազմակերպումը, նոր հնարների կիրառումը կարևոր գործոններ են, որոնք նպաստում են ուսուցման որակի բարձրացմանը, սակայն ընտրության իրավունքը միշտ մնում է ուսուցչին: Այսօր խմբային լիարժեք աշխատանքների իրականացմանը նպաստում է համակարգային-գործնական մոտեցումը: Սակայն համակարգային-գործնական մոտեցումն արդյունավետ է միայն այն դեպքում, եթե մանկավարժն ինքնուրույն ձգտում է այն ներդնել իր դասերում, փորձում է տիրապետել տեսությանն ու պրակտիկային : Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ մարդը չի վախենում հեռանալ կարծրատիպերից և վերակառուցել

ուսուցման գործընթացը՝ հասնելով նոր արդյունքի, եթե նա բաց է շփման համար և ընկալում է այն, ինչ իրեն ասում են փորձառու գործընկերները :

Մանկավարժական գրականության մեջ գործածվում են «խմբային դաստիարակչական գործունեություն» և «խմբային աշխատանք» հասկացություններ: Դաստիարակչական գործունեությունը ենթադրում է արժեքային արդյունք կամ արժևորում, որը ներդրված է նպատակում, որոշվում է սովորողի կողմից մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրելով կամ արժեքների ներքնայնացմամբ: Խմբային աշխատանքը կենտրոնացած է առարկայից արդյունքի հասնելու վրա, որը միշտ ներկայացված է գիտելիքների, հմտությունների և փորձի տեսքով: Վ.Կ.Դյաչենկոն կարծում է, որ խմբային ուսուցման կազմակերպչական կառուցվածքը կարող է լինել համակցված, այսինքն պարունակել տարատեսակներ՝ խմբային, զույգերով, անհատական: Ընդ որում, գերիշխող նշանակություն ունի հենց խմբային շփումը: Ն.Մ.Բորիտկոյի հետազոտությունները ցույց են տվել, որ խմբերի օպտիմալ կազմը պետք է լինի 5- ից 7 սովորող: Երբեմն ավելի արդյունավետ աշխատանք է կազմակերպվում 3-5 հոգանոց խմբերով. այդպես ավելի հեշտ է կազմակերպել աշխատանքը: Համատեղ աշխատանքի համար սովորաբար ձևավորում են առաջադիմությամբ և աշխատանքի տեմպով մոտ սովորողների խմբեր: Խմբերի կազմը որոշելիս կարևոր է հաշվի առնել սովորողների միջև հարաբերությունները: Խմբային աշխատանքի համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի խմբի յուրաքանչյուր անդամ կարողանա արտահայտել իր տեսակետը, ինչպես նաև դաստիարակել լսելու և դիմացինի տեսակետը, կարծիքն ընդունելու, հանդուրժելու ունակություն: Այս պայմաններում

աճում է և անհատական օգնությունը յուրաքանչյուր սովորողին ինչպես ուսուցչի, այնպես էլ խմբի անդամների կողմից: Սովորողների գիտելիքներն արդիականանում են, կոնկրետանում և ամրագրվում հենց իրենց դասընկերոջը բացատրելու ընթացքում: Գ.Կ.Սելևկոն առանձնացնում է ուսումնական գործունեության խմբային աշխատանքի կազմակերպման գործընթացի հետևյալ փուլերը.

⇩⇩

⇩

Ներկայացնենք սրանք առանձին- առանձին

1. խմբային աշխատանքի նախապատրաստում.

- ուսումնաճանաչողական խնդրի առաջադրում,
- աշխատանքի կատարման հաջորդականության հրահանգավորում,
- ըստ խմբերի դիդակտիկ աշխատանքային նյութերի բաշխում,

0. խմբային աշխատանքի իրականացում:

- ծանոթացում առաջադրանքի հետ, խմբի աշխատանքի պլանավորում;
- խմբի ներսում առաջադրանքի բաղադրիչների բաշխում,
- անհատական հանձնարարությունների կատարում;
- խմբային աշխատանքի անհատական արդյունքների քննարկում: Խմբերում առաջադրանքի ընդհանուր քննարկում (լրացում, ճշգրտում, դիտողություններ և ընդհանրացումներ),

0. խմբային աշխատանքի արդյունքերի ամփոփում:

- հաղորդագրություն խմբերի աշխատանքների արդյունքների մասին;
- ճանաչողական խնդրի վերլուծություն, անդրադարձ,

- ընդհանուր եզրակացություն խմբային աշխատանքի և յուրաքանչյուր խմբի ձեռքբերման մասին:

Խմբերի ուսումնական գործունեությունը ենթադրում է մասնակիցների ակտիվ շփում: Միևնույն ժամանակ, պետք չէ դասարանում բացարձակ լռություն պահանջել, քանի որ սովորողները բուռն քննարկումներ են ունենում այս կամ այն հարցի շուրջ: Հաշվի առնելով այս առանձնահատկությունը, պետք է ուսուցման գործընթացում կազմակերպել հատուկ սոցիալականացնող, դաստիարակող

իրավիճակներ: Խոսքը վերաբերում է յուրաքանչյուր սովորողին միջանձնային հարաբերությունների համակարգում ընդգրկելուն, դասընկերների շրջանում ինքնահաստատման հարցում կրտսեր աշակերտին կոնկրետ օգնությանը: Մյուս կողմից, խմբային աշխատանքի ժամանակ սովորողների միջև ստեղծվում են փոխկախված պատասխանատվության հարաբերություններ և հասարակական վերահսկողություն, ծնվում է հասարակական կարծիք, զարգանում է ուսանողների ինքնագնահատականը, առաջանում է կոլեկտիվ նվաճումների համատեղ ապրման գործընթաց՝ որպես ուսումնական գործունեության արդյունավետ կարգավորող: Այս առումով օրինաչափ է դառնում, որ համագործակցությունը թույլ է տալիս կրտսեր դպրոցականներին օգտագործել ավելի վաղ ստացած գիտելիքներն ու քննադատական մտածողության կարողություններն ու հմտությունները ճանաչողական գործունեության մեջ: Համագործակցային ուսուցման կողմնակիցները փոքր խմբերով աշխատանքում կարևորում են հետևյալ առանձնահատկությունները. խմբի յուրաքանչյուր անդամի պատասխանատվություն սեփական և խմբի հաջողությունների համար կամ դրական փոխկախվածությունը, դեմ առ դեմ փոխազդեցություն, յուրաքանչյուրի անհատական հաշվետվությունը և պատասխանատվությունը, սոցիալական և համագործակցային հմտությունների ձևավորումը, խմբային գործընթացի մշակումը: Սկզբունքորեն, այս ամենը համահունչ է ըստ Գ.Կ.Սելևկոյի խմբային աշխատանքի կազմակերպման հիմնական փուլերին: Ուսուցումն իրականացվում է փոքր համագործակցային խմբերով, որը բաղկացած է տարբեր մակարդակի ունակություններով 4-5 սովորողներից:

Այսպիսով,ուսուցիչը համոզվում է, որ յուրաքանչյուր աշակերտ իր կարծիքն է ասել, և բոլորը եկել են

միասնական ընկալման կամ որոշման: Խմբային աշխատանքի արդյունքում ստացվել են խմբային աշխատանքի արդյունավետությունը հաստատող տվյալներ:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Խմբային աշխատանքի հիմնական նպատակը աշակերտների մտավոր կարողությունների զարգացումն է, թիմային աշխատանքի, թիմի հանդեպ պատասխանատվության զարգացումը: Ուսումնական գործընթացում խմբային աշխատանքի ձևերի օգտագործման արդյունավետությունը բազմիցս ապացուցվել է գործնականում: Դասի յուրաքանչյուր փուլ պահանջում է ուսումնական աշխատանքի իր ձևը, հետևաբար այդ ձևերի միայն հմուտ համադրությունը, դրանց ողջամիտ օգտագործումը ուսումնական տարբեր խնդիրների լուծման ժամանակ կհանգեցնի դպրոցի առջև ծառացած խնդիրների լուծմանը : Գոյություն ունեն խմբային աշխատանքի տարբեր տեսակներ, ուստի ուսուցիչը հնարավորություն ունի ընտրել խմբային աշխատանքի տեսակը՝ համապատասխան այն հմտություններին, որոնք պետք է ձևավորվեն: Խմբային աշխատանքը նպաստում է դպրոցականի ինքնագնահատականի ձևավորմանը: Խմբում երեխաներին հնարավորություն է ընձեռվում գնահատել խմբի և իր սեփական գործունեությունը, արտահայտել իրենց կարծիքը, լսել ուրիշների կարծիքը, մշակվում է թիմում աշխատելու ունակություն, կրտսեր դպրոցականները սովորում են լսել խմբի իրենց ընկերների կարծիքը, վերլուծել ասվածը, համաձայնվել կամ հակադրվել անհամաձայնության համար փաստարկներ բերել:

	.Նկատի ունենալով, խմբային ուսումնական գործունեությունը ենթադրում է կրտսեր դպրոցականների շփում, այսինքն՝ պետք է հաշվի առնել գործընթացի առանձնահատկությունները՝ ստեղծել հատուկ սոցիալականացնող, դաստիարակող իրավիճակներ: Միայն այդ դեպքում կկարգավորվեն աշակերտների միջանձնային հարաբերությունները, կգնահատվեն դասընկերների միջավայրում, կբարձրանա նրանց ինքնագնահատականը և խմբային նվաճումների փորձը: .Աշխարհագրության առարկայական ծրագրում նախատեսվում է ախատանքի կազմակերպում խմբային աշխատանքի միջոցով, և գործող դասագրքերում զետեղված ուսումնական նյութերի շուրջ հնարավոր է կազմակերպել նման ուսումնական գործունեություն: Պարզապես ուսուցիչները պիտի յուրաքանչյուր ստեղծագործության ուսումնասիրման գործընթաացում իրականացվող խմբային աշխատանքի բծախնդրորեն նախապատրաստվեն: Այսպիսով, ճիշտ պլանավորված և կազմակերպված խմբային աշխատանքի ժամանակ բոլոր սովորողները հետաքրքրված աշխատում են՝ ուսումնական գործընթացում մտավոր գործունեության մեջ համատեղելով ամբողջ նյութի խմբային և անհատական յուրացումը:

	Խմբային աշխատանքի միջոցով իրականացվում են կրթության առարկայական չափորոշիչներում կողմից սահմանված կրթական արդյունքները: Այսպիսով առաջարկում եմ աշխարհագրության դասաժամերի հաճախակի կիրառել խմբային աշխատանքի տարբեր տեսակներ հաշվի առնելով երեխաների հետաքրքրությունները և կարողությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սուխոմլինսկի Վ., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Ե., 1977, էջ 144

1. Գյուլամիրյան Ջ.Հ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա: Զանգակ,-99, Եր., 2018 , 3140 էջ:
2. Գյուլամիրյան Ջ.Հ., «Ընթերցողական հետաքրքրության ձևավորման և զարգաց-ման հիմնախնդիրը բնագրի շուրջ տարվող աշխատանքի ժամանակ»,

«Մանկավար-ժական և հոգեբանական հիմնախնդիրներ», Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, ՀՊՄՀ, 2012, N 3, էջ 59 (44-50)

Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժագիտություն Ուսումնական ձեռնարկ Երկրորդ բարեփոխված հրատարակություն, Եր., Զանգակ - 97, 2005, 560 էջ

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ



Աշակերտների ստեղծագործական կարողությունների , ուսման մոտիվացիայի զարգացման մեջ կատարվել են որոշակի փոփոխություններ